



Ռ. ԱԹԱՅԱՆ

(Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության խմբագիր)

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտաս-արվեստագետի մասին շատ է գրվել, դեռ շատ էլ կգրվի: Բայց Կոմիտասի մասին գրելուց ոչ պակաս կարևոր է իր՝ Կոմիտասի գրածները երևան հանելը:

Հայտնի է, թե որքան ողբերգական եղավ Կոմիտասի ճակատագիրը: Ծառերին, աւկայն, հայտնի չէ, որ նման մի ճակատագիր էլ բաժին ընկավ նրա գրավոր ժառանգությանը:

Հոգեկան հավասարակշռության խախտման առաջին նուպաներից հետո երկար ժամանակ մեծ երաժշտի և գիտնականի վիճակը անորոշ էր մնում, բավարար խնամքն ու հոգատարությունը պակասում էին: Ավելացնենք և այն, որ նրա գրավոր ժառանգության կամ, ինչպես այն ժամանակ անվանում էին, նրա անտիպ «թղթերի» արժեքի հասարակական գիտակցությունն էլ դեռևս այնքան բարձր չէր: Այսպիսի պայմաններում այդ «թղթերն» իրենց նկատելի մասով ցրիվ եկան:

Պետք է արժանին հատուցել բազմաթիվ այն կազմակերպություններին ու անձանց, որոնց հայրենանվեր ջանքերը նպաստեցին Կոմիտասի գրավոր ժառանգությունը պահպանելու և ի մի հավաքելու գործին: Ներկայումս գրականության և արվեստի թանգարանում հավաքած կոմիտասյան վավերագրերը թեև հեռու են եղած ամբողջությունը ներկայացնելուց, բայց այնքան են, որ

ուպագրված վիճակում կկազմեն 12 պատկանելի հատոր:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը ձեռնարկել է Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակությունը: Տասներկու հատորանոց այդ ժողովածուն պետք է ընդգրկի բացառապես բնագրերից տպված նրա ստեղծագործությունները, երաժշտա-ազգագրական նյութերը, գիտական աշխատանքները, նամակներն ու բանաստեղծությունները, նաև ուսումնասիրական աշխատանքներն ու անավարտ գործերը:

Սա միանգամայն առանձնահատուկ հրատարակություն է: Նյութերը պատրաստի վիճակում դարաված չեն դարակներում: Դրանք մեծագույն մասով սևագիր են, ցրված գունազան տետրերում, տետրակիկներում կամ, պարզապես, առանձին թղթերի վրա: Այդ տետրերը, թեթերն ու թերթիկները, եթե երբևէ կանոնավոր դասավորություն ունեցել են, ապա վաղուց խառնվել, կորցրել են այդպիսի դասավորությունը:

Հետաքրքրական է հիշել մի երկու օրինակ:

«Մարալ գոմեշ» հիասքանչ մեղեդին, որ Կոմիտասը մշակել և մտցրել է «Կալի երգ» կոմպոզիցիայի նոր խմբագրության մեջ և այդպես էլ կատարել է Պոլսում, հայտնաբերվեց խմբերգի հիմնական մասի թղթին

ու գրողայանը ոչ մի նմանություն չունեցող, արխիվում որպես առանձին նյութ գրանցված մի թերթիկի վրա: Հեղինակի ձեռքով դրված պայմանական նշանները հաստատեցին այդ հատվածի պատկանելությունը «Կալի երգ», ավելի ճիշտ «Կալերգ և սայլերգեր» կոմպոզիցիային:

«Հովն անուշը» Կոմիտասի վերջին մշակումներից է՝ հազիվ մեկ-երկու անգամ կատարված Պոլսի «Հայ գուսան» երգչախորհրդում: Այդ խմբերգի նոտաները գտնվում են հեղինակի վերջին տետրերից մեկում, իսկ խոսքերը, որոնց շնորհիվ, ի դեպ, հնարավոր դարձավ ճշտորեն կուսակել հիանալի ցայգերգի կառուցվածքը, գտնվեցին արևմտահայ գրող ու բանասեր Թորոս Ազատյանի արխիվում, մի փոքրիկ թերթիկի վրա, Կոմիտասի ձեռքով, մատիտով հազիվ նրշմարելի գրված:

Այսպիսով, Կոմիտասի անտիպ գործերը հրատարակության համար հավաքելն ու պատրաստելը համբերատար ու մանրազնին հետազոտական աշխատանք է պահանջում:

Մեծ երաժշտագետի երկերի ժողովածուից արդեն յույս են տեսել առաջին և երկրորդ հատորները, որոնք, ցավոք, շատ փոքր տպաքանակ ունեին և կարճ ժամանակի ընթացքում սպառվեցին: Առաջին հատորում գետնդրված են Կոմիտասի՝ գեղջկական երաժշտությունը սկզբնաղբյուր ունեցող մեներգերը և «Ծիծեռնակը» (40 մեներգ դաշնամուրով, որոնցից մի քանիսը՝ առաջին անգամ տպագրված), իսկ երկրորդ հատորում՝ գեղջկական այն խմբերգերը, որոնք Կոմիտասն ինքը տպագրած է եղել և Հովն. Հովհաննիսյանի քանաստեղծությամբ գրված «Գարուն» ընդարձակ խմբերգը (ընդամենը՝ 29 խմբերգ): Երկու հատորում 11 երգերից շատերն ունեն բազմաթիվ տարբերակներ, որոնք նույնպես ինքնուրույն գեղարվեստական արժեք են ներկայացնում: Մի շարք խմբերգեր, դրանց թվում՝ «Կալերգ և սայլերգերը» ներկայացված են նաև ուշ գրված վերջնական տարբերակներով, առելի գեղեցիկ ու բովանդակալից:

Երաժշտագետի ծննդյան 100-ամյակի առթիվ նրա Երկերի ժողովածուի 1-ին և 2-րդ հատորները պետք է վերատպվեն, հրատարակության է հանձնված նաև 3-րդ հատորը:

Այստեղ նույնպես գեղջկական երաժշտության հետ կապված խմբերգեր են, 70 երգ՝ իրենց 100 տարբերակներով, և բոլորը քննադիր վիճակում տպագրվում են առաջին անգամ:

Այս հատորը զգալի չափով ավելացնում է Կոմիտասի մինչև այժմ հայտնի գեղջկա-

կան խմբերգերի թիվը: Անշուշտ, հարցը քանակը չէ միայն:

Հաճախ հարցնում են՝ Կոմիտասի նոր հայտնաբերվող երգերի մեջ կա՞ն, արդյոք, «Անտունիին» կամ «Կալի երգին» համարժեք գործեր:

Հանրահայտ ճշմարտություն է՝ մեծ արվեստագետների գրույն-գործոցներն անկրկնելի են: «Անտունին» այդպիսի գրույն-գործոցներից է: Ինչ վերաբերում է նշանավոր «Կալի երգին», այդ խմբերգի ավելի բարձրարժեք տարբերակ, ինչպես սասցիկը, գետնդրված է Երկերի ժողովածուի 2-րդ հատորում: Բայց դրված հարցի պատասխանն ընդհանրապես այս է. իր ընտրած ժանրում, տվյալ դեպքում՝ հայ գեղջկական երգի ստեղծագործական մշակման մեջ, Կոմիտասն այնքան մեծ վարպետ է, որ նրա գրչի տակից դուրս եկած յուրաքանչյուր տողն իսկ խորապես կրում է այդ վարպետության կնիքը:

Հիրավի, հայտնի չէ սուկ մի դեպք, երբ Կոմիտասի ձեռքը դիպած լինի գեղջկական երգին, այդ երգը մշակելու նպատակով, և արդյունքը ստացված լինի պակաս ֆետուրըրքրական կամ ընդհանրապես ոչ էսկալան: Միանգամայն պարզ է պատասխանը և այն հարցի, թե ինչո՞ւ Կոմիտասն ինքը չի տպագրել այդ անտիպ մնացած երգերը: Բավական է մի փոքր մեջբերում նրա մեթոդի ընկեր և գործակից Մանուկ Աբեղյանի հուշերից. «...Երբ ես նրան հարցրի, թե ինչո՞ւ այդքան սակավաթիվ երգեր նա հրատարակեց, Կոմիտասն սխեց կծու խոսքեր ուղղել և՛ արևելյան, և՛ արևմտյան հայ հուրուսների հասցեին»:

Երրորդ հատորի 70 խմբերգերից 25-ը նախապես հայտնի էին Կոմիտասի աշակերտներից Վարդան Սարգսյանի՝ հիշույթյամբ վերականգնած տարբերակներով (դրանք ժամանակին կատարվել են Պոլսի «Գուսան» երգչախմբում): Բնական է, որ հիշողությամբ վերականգնածը այս կամ այն չափով միայն կարող էր բնագրին նմանել: Այժմ այդ 25 խմբերգն էլ հրատարակվելու են բուն բնագրերից: Ընդհանուր առմամբ՝ երրորդ հատորի բովանդակությունը չափազանց հարուստ է և բազմակողմանի: Նշենք մի երկու առանձնահատկություն:

Հատորն ընդգրկում է հեղինակի ստեղծագործության տարբեր շրջաններին վերաբերող խմբերգեր, որոնց համեմատությունից երևում է կոմիտասյան միաձույլ և ինքնուտիպ ոճի ահմաններում տեղի ունեցած որոշակի զարգացման գիծ: Բացի «ԱՆՀԱՏ» երգերից, որոնց մեջ կան հայ երգչախմբային քնարերգության բարձր նմուշներ, հատորում տեղ են գտել մի շարք ԵՐԳԱՇԱՐԵՐ

(սյուիտներ), որոնք խոշոր կտավի ստեղծագործություններ են: Վ. Սարգսյանի հրատարակած հարսանեկան 6 երգերի շարն այստեղ, բնագիր վիճակում, ներկայացված է ավելի հարուստ տեսքով՝ 9 երգով, կան հարսանեկան երգերի մի երկրորդ շար և գեղջկական երգերի ու պարերգերի 7 այլ շարեր և այլն: Երկերի ժողովածուի երրորդ հատորը երգչախմբերի երգացանկը անակնկալ կերպով կհարստացնի գեղարվեստորեն բարձրորակ, գեղեցիկ խմբերգերով:

Կոմիտասի պրոպագանդման կարևոր հարցերից մեկը նրա երգերը այլ լեզուներով հրատարակելն է: Հոբեյանի առթիվ հրատարակության են հանձնված 23-ական երգից բաղկացած երկու ժողովածու՝ հայերեն

և ռուսերեն բառերով, մեկը՝ մեներգեր, տպագրվում է Մոսկվայում, մյուսը՝ խմբերգեր՝ Երևանում: Այլ, մասնավորապես արևմտաեվրոպական, լեզուներով Կոմիտասի երկերի թարգմանությունն ու հրատարակությունը, ցավոք, շարունակում է մնալ որպես պրոբլեմային հարց: Հրատարակության են պատրաստվում նաև Կոմիտասի նամակները, խմբերգերի հաջորդ (Երկերի ժողովածուի չորրորդ) հատորը և երաժշտական-ազգագրական նյութերի երեք հատորները:

Հայ մեծ երաժշտագետի հոբեյանը, թո՛ղ խթանի ոչ միայն նրա գործերի տպագրությանը, այլև ավելի հաճախ, ավելի շատ և գեղարվեստական բարձրորակ կատարմանը:

